

ԿՕԱ-ը, թափանցելով կենդանի օրգանիզմ եւ աստիճանաբար կուտակվելով հյուսվածքներում, կարող են ունենալ անկանխատեսելի հետեւանքներ: Դրանք ազդում են Էնդոկրին, իմուն, վերարտադրողական ֆունկցիաների վրա, առաջացնում են չարորակ ուռուցքներ, բնածին արատներ, անպտղաբերություն, բնական վիժումներ եւ այլ օրգան համակարգերի հիվանդություններ:

Մի՛ այրեք աշնանը թափված տերեւները եւ խոտերը

Քաջի այն, որ այրման ժամանակ գոյանում է ազոտի եւ ծծմբի օքսիդներ, ածխաթթու գազ, իսկ թերայրման ժամանակ նաեւ ածխաթթվի մոնօքսիդ, որոնց ազդեցության մասին արդեն ասվել է, արտանետվում են այնպիսի նյութեր, որոնք կուտակվել են դրանց մեջ ածի շրջանում: Քաղաքի մթնոլորտային օդ արտանետված վնասակար նյութերը՝ բենզապիրենը, կապարի եւ այլ ծանր մետաղների միացությունները, կուտակվում են բույսերում եւ այրելիս կրկին աղտոտում մթնոլորտային օդը, շնչառական ուղիներով կրկին թափանցում են մեր օրգանիզմ եւ կատարում իրենց կործանիչ դերը:

Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության կողմից:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019,
Բաղրամյան պող. 24 դ,
սենյակ 609,
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ office@awhhe.am
Վեբ կայք՝ www.awhhe.am



Չայրե՛նք աղբը



Թափոնների այրումը հախտում է դրանց ինվանիտ կառավարման շղթան



շշերի, խաղալիքների եւ այլն), պոլիէթիլենային տոպրակների, լինոլիումի կտորների, կաշվին փոխարինող նյութերի քանակը:

Մի՛ այրեք աղբը

Հիշե՛ք, որ աղբի այրումից արտանետվում են օրգանիզմի համար վնասակար նյութեր՝ ազոտի եւ ծծմբի օքսիդներ, ածխաթթու գազ, թերայրման ժամանակ՝ ածխաթթվի մոնօքսիդ (շմուլ գազ), պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրեր: Դրանց հետ մեկտեղ օդն աղտոտվում է խիստ թունավոր կայուն օրգանական նյութերով՝ դիօքսիններով: Դրանց ազդեցությունը զգալի արտահայտվում է, երբ աղբն այրում են բնակելի տարածքներին մոտ:

Աղբայրումից գոյացած թունավոր նյութերը մեծացնում են տարբեր հիվանդությունների առաջացման վտանգը: Այսպես օրինակ, աղբայրման ժամանակ գոյացած հեղձուցիչ ծխից վատանում է սուր եւ քրոնիկ բրոնխիտով անձանց վիճակը:

Աղբի թերայրման ժամանակ գոյացած շմուլ գազը արագ կապվում է արյան հեմոգլոբինի հետ եւ կասեցնում է թթվածնի տեղափոխումը հյուսվածքներ: Սրտի աշխատանքը կատարվում է մեծ ծանրաբեռնվածությամբ, որը հանգեցնում է սրտային հիվանդությունների սրացմանը:

Պարալոնի (սպունգի), պոլիուրետան պարունակող իրերի (փափուկ կահույքի եւ

ավտոմեքենաների նստատեղերի լցանյութ), նեյլոն եւ այլ սինթետիկ կտորների այրումից գոյանում են խիստ թունավոր նյութեր՝ ցիանիդներ: Ցիանիդները խախտում են արյան շրջանառությունը եւ հյուսվածքների ապահովումը թթվածնով, այսինքն բերում են շնչառական եւ սիրտանոթային հիվանդությունների սրացմանը:

Մի՛ այրեք պլաստիկ, պարալոնե (սպունգի), ռետինե իրեր եւ ներկապատված առարկաներ, դրանք վնասում են ձեր առողջությանը: Շատ հաճախ բնակիչները տանը վառարանում կամ բակերում այրում են վերոհիշյալ բաղադրությամբ իրեր, որի ժամանակ գոյանում են խիստ թունավոր նյութեր՝ դիօքսիններ:

Դիօքսինները կայուն օրգանական աղտոտիչներ (ԿՕԱ) են, որոնք առանց քայքայման երկարատեւ պահպանվում են արտաքին միջավայրում:

Աղբը տարբեր տեսակի թափոնների խառը հավաքածու է

Թափոնն այն է, ինչ դեն են գցում: Տարբեր տեսակի թափոններ առանձին հավաքելիս ստանում ենք հումք վերամշակման եւ կրկին օգտագործման համար: Թափոնների էկոլոգիական անվտանգ կառավարումը (դրանց գոյացման կանխարգելումը) քչացնում է աղբի գոյացման ծավալն ու քանակը՝ առանց վտանգելու մարդկանց, կենդանիներին, շրջակա միջավայրին:

Կենցաղային թափոններն իրենց բաղադրությամբ եւ տեսակով շատ բազմազան են: Դրանք կարող են լինել գործածությունից դուրս եկած փայտյա, մետաղյա, ապակյա, ռետինե իրեր, թուղթ, սննդի մնացորդներ, այգուց եւ բանջարանոցից գոյացած մնացորդներ, գոմաղբ, թռչնաղբ եւ այլն: Վերջին ժամանակներս ավելացել է պլաստիկ իրերի (միանվագ օգտագործման բաժակների,



Անգամ տերեւների թերայրման ժամանակ գոյանում են խիստ թունավոր նյութեր: Դրա մասին պետք է որ տեղյակ լինեին պետական այրերը: